

**Ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը**

այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Քրիսթի Թրավել» ՍՊԸ այսուհետ «Կատարող», ի դեմս տնօրեն Ք. Տոնոյանի, որը գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից(կանվանվեն կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. Պայմանագրի առարկան**

1.1 Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

1.2 Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝ (այսուհետ՝ Ծառայություններ)

(հյուրանոցային տնտեսության օբյեկտի անվանումը, գտնվելու վայրը)

(գրտաշրջիկի տեղաբաշխման վայրը կամ շրջագայության երթուղին)

Ժամանման օրը \_\_\_\_\_ Ավարտի օրը \_\_\_\_\_

- Ուղեկցող անձինք
- Տրանսպորտային ծառայություններ՝  միակողմանի  երկկողմանի  էքսկուրսիա
- Մնունդ  նախաճաշ  ճաշ  ընթրիք  հավելյալ սնունդ
- Այլ ծառայություններ  բուժում  գիղ  հավելյալ վճարովի ծառայություններ

1.3 Ծառայությունները մատուցված են համարվում Պայմանագրի 1.2 կետում նշված Ծառայությունների ժամկետի ավարտի պահին՝ երկկողմանի հանձնման-ընդունման ակտը ստորագրելով:

**2. Կողմերի Իրավունքները և պարտավորությունները**

- 2.1 Կատարողը պարտավոր է Ծառայությունը մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով, Պայմանագրի 1.2 նշված ժամկետում,
- 2.2 Պատվիրատուն պարտավոր է պահպանել պայմանագրով նախատեսված պայմանները ու կանոնները:
- 2.3 Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:
- 2.4 Կատարողի հետ փոխադարձ համաձայնությամբ ավելացնել, պակասեցրել, փոփոխել 1.2 կետում նշված ծառայությունների ցանկը և դրանց կատարման ժամկետները:
- 2.5 Կատարողն իրավունք ունի չվերադարձնել վճարված գումարների 25%-ը, եթե Պատվիրատուն հրաժարվում է ծառայություններից՝ մինչև ժամանման օրվանից երկու օր առաջ և 50 %-ը, եթե պատվիրատուն ամբողջությամբ հրաժարվել է ժամանման օրվանից մեկ օր առաջ:
- 2.6 Պատվիրատուի կողմից 1.2 կետում նշված ծառայություններից հրաժարվելու դեպքում Կատարողը պարտավոր է, հաշվարկելով 2.5 կետում նշված պայմանները, մնացորդային գումարը փոխանցել Պատվիրատուի սոց. Փաթեթի հաշվին:

**3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը**

- 3.1 Պայմանագրի գինը կազմում է \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ ,որից Հյուրանոցի արժեքը՝ \_\_\_\_\_ ( \_\_\_\_\_ ) ՀՀ դրամ:
- 3.2 Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1 կետում նշված պարմանագրի գինը վճարվում է միանգամից կամ ամենամսյա տարբերությամբ՝ ընդ որում վերջին վճարումը կատարվում է մինչև ընթացիք տարվա դեկտեմբերի 25-ը, իսկ առաջին վճարումը կատարվում է պատվիրատուի կողմից պայմանագիրը ստորագրելուց հետո 7(յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 3.3 Պայմանագրի գինը պետք է վճարվի մինչև տարվա ավարտը մնացած ամիսների ընթացքում հավասարաչափ մարումներով, ընդ որում բանկային հաշվեհամարին արդեն կուտակված ամբողջ գումարը, որպես կանխավճար պետք է վճարվի Կատարողին սույն պայմանագիրը բանկին ներկայացնելու 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պայմանագրային գնի մնացած հերթական վճարթևները՝ ոչ ուշ քան յուրաքանչյուր ամսվա 15-ը: Ընդ որում եթե պայմանագրով պայմանագրային գինը գերազանցում է սոցիալական փաթեթով հատկացվող գումարի սահմանաչափը, ապա գերազանցող չափը վճարում է սեփական միջոցներից:
- 3.4 Պայմանագրային գինը պետք է վճարվի Կատարողին ամբողջությամբ(պատվիրատուի ցանկությամբ) սույն պայմանագրի բանկին ներկայացնելուց 3 աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում , եթե Պայմանագրով պայմանագրային գինը գերազանցում է սոցիալական փաթեթով հատուցվող գումարի սահմանաչափը, ապա գերազանցող մասը Պատվիրատուն վճարում է սեփական միջոցներից:

**4. Կողմերի պատասխանատվությունը**

- 4.1 Կատարողի՝ օրենքին հակասող գործողություններով Պատվիրատուին հասցված վնասը ենթակա է հատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,
- 4.2 Ժամանակավոր կացության, այցելության և տարանցիկ վայրերում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով, այդ տվում իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի պատասխանատվությամբ:

**5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել էր Ֆորս –Մաժոր հետևանքով, որի ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ զանգահարել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրությունը, քաղաքական հուզումները, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

**6. Վեճերի լուծման կարգը**

6.1 Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների կամ ՀՀ օրենսդրության միջոցով:

**7. Եզրափակիչ դրույթներ**

- 7.1 Պայմանագրում յուրաքանչյուր փոփոխություն կատարվում է գրավոր և ստորագրված երկու կողմերի կողմից:
- 7.2 Պայմանագիր կազմված է հավասարազոր է իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից՝ յուրաքանչյուր կողմերի մեկական օրինակ:

**Պատվիրատու**

**Կատարող**

ԱԱՀ \_\_\_\_\_  
 Հասցե՝ \_\_\_\_\_  
 Անձ՝ \_\_\_\_\_  
 Հեռ.՝ \_\_\_\_\_  
 Աշխ. Վայրը՝, հասցե \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_ Ստոր. \_\_\_\_\_

**<<Քրիսթի Թրավել>> ՍՊԸ**  
 Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 32/40  
 <<Արդշինինվեստ>> ՓԲԸ h/h 2474702499360000  
 Հեռ.՝ 096 56-56-42, էլ-փոստ qristytravel@mail.ru  
 ՀՎՀՀ՝ 00848404  
 Տնօրեն՝ Ք. Տոնոյան \_\_\_\_\_